սինձ[69] անուշահոտ բույսի տերևների վրա, ապա սկսում էին կերակրել թթի տերևներով, սկզբում մանրացած, ապա ամբողջական տերևներով, առանց ճյուղերի, վերջն էլ ճյուղերից չպոկած։ Գերադասում էին թարմ ճյուղերի վրա բացված տերևները, որոնք ավելի նուրբ և հյութալի են լինում։ Այդ պատճառով թթի ծառից հին ճյուղերը ցաքատավ կտրտում էին և թթի ծառերի սաղարթը երբեք ճոխ չի լինում։ Հետևում էին, որ տերևը լինի մաքուր և չոր։ Տերևները փռվում էին սկզբում պղնձե սինինեէրի և ապա շաթանեէրի վրա և տան մեջ՝ գետնին։

Բոժոժները հյուսվում էին ավելների վրա։ Բոժոժը վաճառքի էր հանվում։ Մի փոքր մասը պահվում էր տանը՝ ջեջիմ, գլխի շալ, շարդաթ պատրաստելու համար՝ թելը խլիկով ոլորելուց հետո։

Սակայն հաճախ հատուկ զետեղարան էր կառուցվում շերամը կերակրելու և պահելու համար։ Դա կոչվում էր կնիմ՝ գոմ։ Մի քառանկյունի տարածություն ընտրելով, երեսը մաքրում էին խոտից և հավասարեցնում։

Շերամը պահելու համար չորս անկյուններում տնկվում էին երկհեղ՝ հեշա՝ գլուխ ունեցող սյուներ, մի զույգը մոտ 2,5—3,0 մ, դիմացի զույգն ավելի կարճ, մոտ 1,5—2,0 մ բարձրությամբ։ Թե՛ առաջին և թե՛ երկրորդ զույգ սյուների վրա ձգվում էին հորիզոնական դիրքով մի-մի հաստ ձող, հրապարակի երկար կողմերով, ապա այդ մի ձողից դեպի մյուսը իրար կողքի շարում էին մոտիկ-մոտիկ ավելի բարակ ձողեր և ամբողջը ծածկում էին խոտով կամ ծղոտով։ Կողքերը լցնում էին ցցերով, որոնց վրա հյուսվում էին ճիպոտնէր։ Անձրևային կամ ցուրտ օրերին այդ սրահի կողերը ծածկում էին դրսից թաղիքներով և փալասնէրավ, որպեսզի ճիճուն չմրսի։



Գծ. 10. Շերամի կնիմ՝ գոմ։

Աշխատում էին բարձրաձայն չհաշվել ճիճուների թիվը չար աչից պաշտպանելու համար։

Ենթադրվում էր, որ գողացած տերևով մեծացրած ճիճվի բոժոժն ավելի խոշոր և հաստ է լինում։

[69] Tragopogon pratensis.